## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7**
**28.03.2025 թ.**

**1. Համալսարանում վճարովի համակարգում սովորող ուսանողների վարձավճարների զեղչերի քննարկում և հաստատում:**

ա. համալսարանի ֆակուլտետների ուանողներից 133-ին տարբեր տարակարգերով տրամադրել զեղչեր՝ 20-50 %-ի չափով:

բ. Արցախից բռնագաղթված և անապահով պայմաններում ապրող մեր հայրենակիցներից Ագրոնոմիական և Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետների 1-ական ուսանողներին տրամադրել ուսման վարձի 50% զեղչ:

գ. Երկրագործության գիտական կենտրոնի ասպիրանտ, համալսարանում կրեդիտներ ստանալու համար դասընթացներ անցնող Հայկ Ռոլանդի Ղազարյանին տրամադրել 20% զեղչ:

| Հ/հ | Տարակարգի անվանումը | Զեղչի տոկոսը | Անասնաբուժական բժշկագիտ. և անասնաբուծության | Ագրոնոմիական | Պարենամթերքի տեխնոլոգիաների | Ագրարային ճարտարագիտության | Ագրոբիզնեսի և տնտեսագիտության | Ագրոբիզնեսի դեպարտամենտ | Սիսիանի մասնաճյուղ | Վանաձորի մասնաճյուղ | Ա.Ե. Քոչինյանի անվ. քոլեջ | Մ. Թումանյանի անվան քոլեջ | **Ընդամենը Համալսարանում** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ապրիլյանի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած | 20 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **0** |
| 2. | Մարտական հերթապահություն իրականացրած | 30 | 0 | 2 | 2 | 4 | 3 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **11** |
| 3. | Մինչև մեկ տարեկան երեխա ունեցող | 50 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **1** |
| 4. | 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ | 50 | 0 | 1 | 1 | 1 | 1 | 0 | 0 | 1 | 2 | 0 | **7** |
| 5. | Սոց. անապահովության սայմանային միավորից բարձր միավոր ունեցող | 30 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **1** |
| 6. | Սոց. անապահովության միավորից ցածր միավոր ունեցող | 20 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **0** |
| 7. | Բարձր առաջադիմություն ունեցող | 20 | 6 | 5 | 12 | 5 | 34 | 6 | 1 | 4 | 26 | 0 | **99** |
| 8. | Երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողները | 30 | 0 | 1 | 0 | 1 | 2 | 0 | 0 | 0 | 6 | 0 | **10** |
| 9. | Վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքի ուսանողներին **(քոլեջ )** | 30 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | **1** |
| 10. | Հաշմանդամ կամ հաշմանդամ ծնող ունեցող | 30 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **0** |
| 11. | Զինվորական հաշմանդամ ծնող ունեցող | 30 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **0** |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12. | ԲՈՒՀ-ի աշխատող հայցորդ | 50 | 0 | 1 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **3** |
| 13. | Ռեկտորատի որոշում | 50 | 0 | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **2** |
| | | 20 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **1** |
| **Ընդամենը** | | | **6** | **12** | **16** | **14** | **41** | **6** | **1** | **5** | **35** | **0** | **136** |

**2. ՀԱԱՀ ռազմավարական գործողությունների պլանի և ինստիտուցիոնալ հավատարմագրման համատեքստում հաստատված «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիր»:**

ՈԳԱ կենտրոնի տնօրենի զեկույցն ընդունել ի գիտություն:

**3. «Աշխատանքային կիսամյակի հետ կապված գործատուների հետադարձ կապը և առկա խնդիրները»:**

Ա. Դաշտոյանի զեկույցն ընդունել ի գիտություն:

**4. Քոլեջի, առկա ուսուցման բակալավրիատի, մագիստրատուրայի ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների/մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը և խնդիրները:**

Ստորաբաժանումների ղեկավարների զեկույցներն ընդունել ի գիտություն:

**5. Ընթացիկ հարցեր**

**5.1 Ա. Ե.Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի տնօրեն Վ.Վարդանյանի առաջարկը՝ ՀԱԱՀ միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ստորաբաժանումների հետ կապված հարցերը քննարկելու համար առանձին հանդիպում կազմակերպելու անհրաժեշտության վերաբերյալ՝ հանձնաժողովների բոլոր անդամների ներկայության պայմաններում (հիմք՝ Ռեկտորատի՝ 21.02. 2025թ.նիստի թիվ 6 արձանագրության ընթացիկ հարցերում հնչած առաջարկությունը):**

**5.2 Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի դեկան Ս. Դավեյանի հաղորդումը և ապա առաջարկը՝ «Սննդամթերքի տեխնոլոգիաներ» հեռակա 1-ին կուրսի 1-ին կիսամյակը գրեթե փակած, 2-րդ կիսամյակում անսպասելիորեն առողջական լուրջ խնդրով վիրահատության ենթարկված ուսանողի վերականգնողական շրջանից հետո ուսումնառությունը շարունակելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու մասին:**

5.1 հավանություն տալ Վ. Վարդանյանի առաջարկին և ՀԱԱՀ միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ստորաբաժանումներին առնչվող հարցերը քննարկելու համար հրավիրել համապատասխան հանձնաժողովի նիստ:

5.2 «Սննդամթերքի տեխնոլոգիաներ» հեռակա 1-ին կուրսի ուսանողի հարցը թողնել քննարկելու նրա վերականգնողական շրջանի վերաբերյալ բժշկական եզրակացության արդյունքներն ուսումնասիրելուց հետո, որտեղ նշված ժամկետներից պարզ կլինեն հետագա անելիքները:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ՁԱՔՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. Ժ. ՄԽԵՅԱՆ